

ԱՐԱՐՁԻ ԱԻԱՆԴՐ

Աշխարհի մէջ ամեն ինչ կատարեալ էր ստեղծուած, ասում է հին աւանդութիւնը, բայց մարդիկ իրանք են փչացնում կեանքը, նեղում են իրար, հոգիների թեւերը ճմլում, որ չկարողանան սաւառնել, արգելք են հանդիսանում հոգւոյ բոլոր գեղեցկութիւնը և ոյժը երևան գալուն, մեղք են դրժում — քանզում են Աստուծոյ կամքը և աւանդը:

Արարիչը աշխարհ ուղարկելով մարդուն, նրա հետ ուղարկում է նաև ուղեկիցներ՝ նրա իրաւունքները: Աշխարհի Տէրը, ինչպէս բարեխնամ Հայր, հոգս է տանում մարդու մասին, որ նա չմոլորուի կեանքի անտառում, որտեղ ուղիները և ճանապարհները խառնուած են իրար, որ չոչնչանայ գիշատիչ բռնութեան ձեռքում և ահա դրա համար նրա հետ ուղարկում է ուղեկիցներ — նրա իրաւունքները, որպէս զի սրանք լինին նրա գէտ պահապանը:

— Գնա, որդեակ իմ, աշխարհ և կատարիւր քեզ ուղարկողի կամքը. այս խօսքերով է ճանապարհ ձգում Արարիչը իւր որդկերանցից ամեն մէկին:

— Քո կամքը թող սուրբ լինի, Քո աւանդը ինձ համար օրէնք: Ես այդ գիտեմ, բայց և մեծ են կեանքի ծանրութիւնները: Հայր, թող անցնի այս բաժակը ինձնից, խնդրում է որդին:

— Գնա, որդեակ իմ, մի վախենար կեանքից. գնա համարձակ:

— Տէր, ազատիր ինձ, կեանքի ծանրութիւնը զգում եմ ամեն լոպէ, սակայն դժուարանում եմ թեթեւացնել, պարզ չեմ ըմբռնում քո կամքը:

— Զգտիր ըմբռնելու, որդեակ, մի դադարիր մտածելուց: Իսկ կեանքիդ ծանրութիւնը թեթեւացնելու, նրա տակ չճնշուելու համար տալիս եմ քեզ այս աւանդը:

Երբէք չմոռանաս որ դու մարդ ես, աշխարհի բոլոր

արարածների մէջ իմ ամենասիրելի: Մի մառանար և մարդկային իրաւունքներդ: Ինքդ քեզ մի անուանարկիր, մի ստորացնիր քո արժանաւորութիւնը: Ուրիշներին էլ մի թոյլ տալ ստորացնել, օտնատակ անել քեզ: Քո հոգին իմ Պատկերն է: Քո իրաւունքները՝ իմ լաւագոյն շնորհները: Պահպանիր նրանց, որպէս բիբ ական: Ես նրանց պահապան եմ կարգել քեզ, իսկ քեզ՝ նրանց: Դու այդ իրաւունքների գործադրութեան մասին հաշիւ ես տալու ինձ:

— Սակայն որոնք են իմ իրաւունքները, Տէր Աստուած. ինչպէս պէտք է թեթեւացնեն նրանք իմ կեանքի բեռը, այն խաչը, որ տանում եմ ծնունդիցս մինչև մահս:

Քո իրաւունքները՝ հոգուդ իրաւունքներն են: Այն հոգու, որը ես Ինքս եմ՝ ներշնչել քեզ: Այդ իրաւունքների հակառակորդը՝ ինձ հակառակորդ է: Նա քո իրաւունքներից չէ զրկում քեզ, այլ այլանգակում է քո մէջ Աստուծոյ հոգին: Լսիր ինձ, մտաբերիր իրաւունքներդ:

Քո առաջի իրաւունքն է՝ խղճի ազատութիւնը: Խիղճը Աստուծոյ հոգին է մարդու մէջ, իսկ որտեղ Աստուծոյ հոգին է, այնտեղ է և ազատութիւնը, Աստուծոյ հոգին չէ կարող կաշկանդուել: Ո՛չ որ և ոչինչ չեն կարող շղթայել քո խիղճը, նա ազատ է: Հասկան՞ում ես արդեօք թէ ի՞նչ է նշանակում ազատ խիղճ: Դա՛ ազատ հոգւով, ազատ ծառայութիւն է Աստուծոյ: Ինքդ ընտրիր քեզ համար Աստուած: Աղօթիր նրան, ինչպէս սովորեցնում է քեզ քո սիրտը: Քո հոգու մէջ Աստուծու սեղան շինիր, որպէս ազատ և սիրող որդի և ոչ որպէս վարձկան կամ վախկոտ ու կամազուրկ ստրուկ: Ինչպէս սրաթուիչ արծիւը հուժկու թևերով բարձրանում է վերև, նոյնպէս և դու ազատ հոգւով սաւառնիր դէպի երկինք, դէպի իմ արդարութիւնը և դրա համեմատ էլ ուղղիր քո ամբողջ կեանքը: Սակայն թանգ դնահետեւով քո հոգու ազատութիւնը, մի ճնշիր և օտարի խիղճը: Մի արգելիր և քո դրացուն Աստուած ընտրել իւր ճանապարհով: Բռնութիւն մի գործ դնիր նրա խղճի վրայ: Բոլոր մարդկանց խիղճն էլ հաւատար սուրբ է: Ե՛ւ նրանց խիղճը, որոնք գտել են ճշմար-

տութիւնը, և նրանցը, որոնք փնտրում են նրան, նոյնպէս և նրանցը, որոնք մոլորւում են:

Բարբի խիղճը Աստուծոյ Հոգին է: Բարբի մէջ սրբութիւն կայ, որը միշտ և յարածամ բռնութեան համար անմատչելի պիտի մնայ: Մի յանդգնիր կոշտ ձեռքով դիպչել մարդուս ամենասուրբ զգացմունքին:

Բռնութիւնը մարդուս չի խոհեմացնում: Նա սարսափեցնում է զայրացնում, բայց դէպի 'ճշմարտութիւն չի տանում: Զգտելով բարան, մի դնար չարութեան ճանապարհով: Դու, որ ազատ ոչնչումով գտել ես Աստուծուն, բացարձակ պատմիր նրա մասին ամենքին, աշխատիք բայց անել ճշմարտութիւնը, կանչիր ազատ, բայց բռնութիւն մի գործ դնիր:

Իմ սիրելի որդիքը, մարդիկ, միլիոնաւոր են և ամենքին կարողութիւն է տրուած իմ կամքը կատարելու: Իմ կամքը նրանց մէջ դեռ ևս կատարելապէս չի թաղաւորում, բայց նա վաղ թէ ուշ կ'թաղաւորի: Ես գիտեմ այդ սպասում եմ, ուրեմն դու էլ սպասիր: Սպասիր, գնահատա՛յ՝ յետ մնացողներին ևս ճանապարհ ցոյց տալով, ես ուղարկել եմ և ուղարկում եմ երկրի վրայ մարդաբէնեա: Նրանք մարդկանց աւետում են իմ կամքի մասին, լուսաբանում են նրան և իրանց հրեղէն հոգիների բոցերով հալեցնում են սառած սրտերը: Եւ նրանց կեանքը ի դուր չի անցնում, նրանց սրտերի կայծերը չեն հանգչում երկրի մէջ:

Մութ մարդիկ սպանում են Աստուծոյ ծառաներին, բայց նրանց ժառանգները, կեանքի ինչքը չգտնելով, ստիպւում են նրանց աւանդները դնել իբրեւ հիմք իրանց կեանքի: Ժշմարտութիւնը յաղթահարում է և բռնութիւնից չի ոչնչանում: Եւ այդ ճշմարտութեան շնորհիւն է, որ երկրի վրայ կեանքը չի թառամում, այլ գնում է և միշտ պիտի գնայ դէպի լոյս՝ միշտ և միշտ մինչև յաւիտեան:

Այդ է կեանքի հիմք դրած իմ օրէնքը և այդ կեանքի ընթացքը չեն կարող կանգնեցնել հոգու դաճաճները:

որոնց խելքից վեր է հասկանալ կեանքի համաշխարհային օրէնքը: Մի ցածան սր մինչև դաճաճները, այլ բարձրացիր մինչև մարդարէները: Ոչ թէ մոլորուողների մարմինը այրիւր կրակով, այլ նրանց հոգիները այրիւր հրեղէն խօսքով: Մի մեռցներ, այլ կենդանացուր: Ուրիշների հոգու վրայ շղթաներ մի դներ, այլ շղթայուածներին տուր ազատութիւն:

Հոգու ազատութիւնը իմ ազատ շնորհն է մարդուն: Եւ ով կաշկանդում է այդ ազատութիւնը, նա աշխատում է ուղղել ինձ. կարծում է աւելի լաւացնել ինձ, քան թէ եմ: Ողորմելի անմիտ, հոգու խեղճ անզօրութիւն: Թող այդ ձգտումը հեռի լինի քեզից: Ես տուել եմ քեզ ազատ բանականութիւն և ազատ հոգի, պահպանիր նրանց քո մէջ: Մի հանգցրու և մի մռայլիր նրանց ուրիշի վրայ գործադրած բռնութեամբ: Այս է իմ առաջի աւանդը. անխորտակելի օրէնքը:

— Կկատարեմ, Տէր իմ, Քո աւանդը՝ ճշմարտութիւն է:

— Այժմ՝ երկրորդ աւանդը, լսիր:

Ես ստեղծեցի կեանքը, կեանքի արշալոյսին դու չկայիր, կային միայն ստորին արարածներ առանց մտքի. կար միայն բնաղդում:

Զարգացնելով կեանքը՝ ստեղծեցի միտք. ուղեղի մէջ վառեցի կրակ. բայց միայն միտքը բաւական չէ: Միտքը պէտք է ունենայ թևեր, նա պէտք է թռչի, բոցավառէ ուրիշներին և ինքը աւելի ևս լուսավառուի: Միտքը պահանջում է ձև, արտայայտութիւն: Ես այդ էլ տուի:

Հաղարաւոր տարիների ընթացքում կեանք ստեղծելով. կենդանի արարածներին բարձրացնելով դէպի կատարելութիւն, ես, վերջապէս, ստեղծեցի քեզ և տուի իմ ամենամեծ գաղտնիքներից մէկը՝ մտքի ստեղծագործութիւնը: Եւ որպէս զի կարողանաս քո ստեղծագործութիւնը տարածել, ընդարձակել, ես քեզ տուի խօսք քո մտքերը այլ բանական արարածներին հաղորդելու համար: Մեծ պարգև է այդ, պահպանիր նրան. այդ քո իրաւունքն է և պարտքը: Մի դարձներ նրան կենդանու-

մոնչոց, այլ զարգացնուր և ընդարձակիր։ Իսկ ով արգելէ քո խօսքը, յանդգնի ասել. «Զրկում եմ քեզ մտքի ստեղծագործութիւնից և խօսքի ազատութիւնից, այն ժամանակ ազատ կերպով ասան նրան».

— Անմիտ, նա որ ստեղծել է տիեզերքը խօսքով, որ ուղարկել է ինձ աշխարհ, որ տուել է ինձ միտք և խօսք, նոյն Արարիչը տուել է նաև խօսքի ազատութիւն։ Ինչի՞ վրայ ես ձեռք բարձրացնում, ի՞նչպէս ես համարձակում փշել այն բոցի վրայ, որը վառել է աշխարհի Ստեղծողը։ Մի կարծիր, որ դու կոչուած ես ուղղելու Աստուածային գործը։ Ո՞վ ձեռք է բարձրացնում մարդու խօսքի և նրա ազատութեան վրայ — գործում է ամենածանր բռնութիւն, սպանում է Հոգւոյ ծնունդը։ Իսկ իւրաքանչիւր հոգու սպանող ամենից առաջ ինքն է հոգեկան մեռեալ, նրանում չկայ կեանք։ Նա իւր մահաբեր գործով թէ՛ ինքն իրան և թէ՛ իր գործը դատապարտում է մահուան։ Այդ է կեանքի անխորտակելի օրէնքը։ Այդ օրէնքը աւանդում եմ քեզ։

— Ընդունում եմ, Տէր, և երկիւղածութեամբ լսում.

— Լսիր շարունակութիւնը, շնորհում եմ քեզ և երրորդ իրաւունքդ։ Իրաւունք՝ մարդկանց հետ հաղորդակցութիւն ունենալու։ Պահպանիր նրան և նրա կեանքի բոլոր տանելը հեշտ կլինի քեզ համար.

Գիշատիչ թռչունները ընդհանրութիւն չգիտեն։ Ես պատուիրել եմ նրանց երբէք մի տեղ չհաւաքուել։ Իսկ երբ ստեղծեցի քեզ, այն ժամանակ քո և քեզ նմանների կեանքի հիմք դրի ձեր շահերի ընդհանրութիւնը։ Կազմեցէք բոլորդ մի ընտանիք։ Բայց դեռ ես բոլորդ չէք հասկացել իմ կամքը։ Ձեզանից շատերը ձգտում են ապրել դազանների պէս՝ ջոկ, ջոկ։ Ուրեմն հաւաքուեցէք մի տեղ, մտքեր փոխանակեցէք իրար հետ։ Միասին որոնեցէք ձեր ընդհանուր յաւիտենական ճանապարհը։ Միաւորուած բանականութեամբ և կամքով կազմեցէք ձեր և ձեր յետնորդների կեանքը։ Կեանքի ճանապարհը մեծ և դժուարին սխրագործութիւն է։ Մի մարդու խելքն ու կամքը, ով

էլ լինի նա, չի կարող ի կատար ածել նրան: Ոչ կարող է հասկանալ և ոչ սրբութեամբ կատարել:

Այդ չեն կարող յաջողեցնել մի խումբ կամ մի բուռն մարդիկ: Հարկաւոր է բոլորի խելքն ու միտքը, հարկաւոր է իւրաքանչիւրի բարի կամքը: Ուստի և եթէ մէկը քեզ և քո մերձաւորին դէն հրէ ընդհանուր կեանք կազմակերպելուց, ասացէք նրանց,

— Անմիտներ, միթէ միայն ձեզ է արուած Աստուածային արդարութեան ի սրբութիւնը հասկանալու և ուրիշների առաջ բաց անելու շնորհը, յանդգնութիւն չէ արդեօք ձեր այն վստահութիւնը, որով ընդունակ և կարող էք համարուի՞ ձեզ՝ ձեր խելո՞ճ կամքով իրադարձել Աստուածային ամբողջ կամքը ձեզ շրջապատողների մէջ:

Բոլորի իրաւունքն է քննել ամենքի կեանքը: Որդեակ իմ, մի մոռանաւ այդ իրաւունքը: Եթէ դու անցել ես արդէն ճանապարհի մի մասը, իսկ քո մերձաւորը գալիս է յետևիցդ, նրա առաջը ևս լուսաւորիր: Արա՛յ այդ:

Եւ եթէ զգում ես, որ գիտես արդէն այն, ինչ որ չգիտէ քո դրացին, նրան ևս լուսաւորիր. հանիր միտութեան միջից և տար դէպի լոյս: Երբ տեսնում ես, որ նա երբեք չէ, մի թողնիր որ ընկնի, ընկաւ, օգնիր բարձրանալու. չի կարող ստի կանգնել՝ ինքդ բարձրացրու: Նեցուկ եղիր ուրիշին ինչով որ կարող ես. իսկ դու ինչ բանի մէջ որ թոյլ ես աշակցութիւն փնտրիր ուրիշներից: Գնացէք միմեանց մօտ, ծառայեցէք միմեանց: Թող բոլորիդ կեանքը լինի ընդհանուր գործ և դուք այն ժամանակ կլինիք բաղդաւոր: Չէ որ ձեր բոլոր ունեցածը իմն է: Եւ եթէ դուք իմաստութիւն կունենաք քչով կարգաւորել ձեր կեանքը, այն ժամանակ ես ձեզ աւելի կտամ: Ես իւրաքանչիւրիդ կտամ մտքի հարստութիւն. ամբողջ աշխարհի գաղտնիքը բաց կանեմ քո առաջը: Յոյց կտամ ձեզանից ամեն մէկի մէջ ծածկուած հոգւոյ ամբողջ գեղեցկութիւնը: Պրացու հոգու իւրաքանչիւր լարի ձայնը հասկանալի կլինի քեզ: Պարզ կլինի քեզ համար կեանքի, երկնքի և երկրի բոլոր խորութիւնը:

Ահա իմ երրորդ աւանդը քեզ, որդեակ իմ, փնտրիր մարդկանց հաղորդակցութիւնը, ապրիր քեզ շրջապատողներին հետ ընդհանուր կեանքով, նրանց ծառայեցրու քո բանականութիւնը և նոյն իրաւունքը ճանաչիր ուրիշներին մէջ։

— Շնորհակալ եմ, հայր, կկատարեմ։ Քո արդարութիւնը յաւիտենական է և Քո խօսքը ճշմարտութիւն։ Եւ բարի է, որ պիտի կատարես։ Կատարելով իմ աւանդը, դու կլինես մարդ, դու կապրես, դու կսեղծագործես։ Դու կլինես ստեղծուած՝ արժանի Ստեղծողին։ Դու կլինես ինձ նման։ Քո ուղեկիցները, քո իրաւունքները կլուսաւորեն կեանքիդ ուղին և կպայծառացնեն նրան բաղդաւորութեան ժպիտով։ Պինդ պահպանիր նրանց։ Մի զիջանիր ոչ ոքի։ Պաշտպանիր անպատկառ օտնձգութիւններից և մի վախենար նրանց համար մաքառելուց։ Իրաւունքի համար մարդոց դէմ մղած կռիւդ, այն իրաւունքի, որ Աստուծուց է շնորհուած քեզ, միշտ կվերջանայ յաղթութեամբ։

Վախեցիր զիջողութիւններից, փոքրոգութիւններից, խայտառակ կերպով անձնատուր լինելուց։ Ամօթալի կերպով ձեռք վերցնելով օրինաւոր իրաւունքներիցդ, դու մերժած կլինես Աստուծոյ բնատուր շնորհները։ Մտքիդ մէջ միշտ ունեցիր, որ իմ աւանդած իրաւունքներից զուրկ մարդը — ոչինչ է։ Նա կաւ է և ոչ բրուտ, նա յարդ է և ոչ կրակ, նա համից զուրկ աղ է — միմիայն օտնատակ լինելու պիտանի։

Սակայն այդ բոլորը թող չպատահի քեզ հետ, որդեակ իմ. մի վախենար կեանքից, Գնահամարձակ։ Պահպանիր քո իրաւունքները, նրանք էլ քեզ կպահպանեն կեանքի անչափ ծանրութիւնից։ Գնահ, դնահամարձակ։ Դու մենակ չես, քեզ հետ եմ ես։

Թարգմ. Գրիգոր Բեկյ, Նոր-Արեւեան.

(Вѣст. тря. № 9.)

